

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏՆ ԸՆԴՈՒՆԵՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՐԵՆՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆԸ**

27.09.2013

Գեղարքունիքի մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը սեպտեմբերի 26-ին մարզպետարանում ընդունեց Ֆրանսիայի Հանրապետության Իզեր մարզի Գրենորլ քաղաքի մշակույթի եւ լրատվության ոլորտի տասներկու ներկայացուցչից բաղկացած պատվիրակությանը: Գեղարքունիքի մարզպետը, բացելով հանդիպումը, նշեց, որ ՀՀ Գեղարքունիքի եւ Ֆրանսիայի Հանրապետության Իզերի մարզի միջեւ 2004 թվականից ի վեր հաստատված ապակենտրոնացված համագործակցության ընթացքում որոշակի ձեռքբերումներ են արձանագրվել տուրիզմի, առողջապահության եւ ֆրանսերեն լեզվի ուսուցման բնագավառներում, ինչը հիմք է տալիս կարծելու, որ շարունակվող համագործակցության հեռանկարում կարող են շոշափելի ձեռքբերումներ արձանագրվել նաեւ գյուղատնտեսության, ձկնաբուծության եւ արդյունաբերության բնագավառներում: Ֆրանսիայի Հանրապետության Գրենորլ քաղաքի պատվիրակության ղեկավար, Գրենորլ քաղաքի հայկական մշակույթի տան տնօրեն Գրիգորի Ադամյանը նշեց, որ Ֆրանսիան պատրաստակամ է աջակցելու ինչպես մշակութային, այնպես էլ սոցիալ-տնտեսական եւ կենսական նշանակության ծրագրերի կյանքի կոչմանը Գեղարքունիքի մարզում:

Հանդիպման ընթացքում մարզպետ Ռաֆիկ Գրիգորյանը հյուրերին ներկայացրեց Գեղարքունիքի մարզի տնտեսական եւ ժողովրդագրական նկարագիրը, ձեռքբերումները, զարգացման հեռանկարները, ֆրանսիական կողմի հետ համագործակցության հետագա հնարավորությունները: Մարզպետն իր խոսքում կարեւորեց նոր աշխատատեղերի բացման անհրաժեշտությունը եւ հույս հայտնեց, որ առաջիկա տարիների ընթացքում ամենատարբեր աղբյուրներից սպասվող ներդրումների շնորհիվ մարզում կյանքի կկոչվեն նոր ծրագրեր, կհիմնվեն համատեղ ձեռնարկություններ, որոնք երկուստեք փոխշահավետ կլինեն: Ֆրանսիայի պատվիրակները դիտեցին Գեղարքունիքի մարզի մասին պատմող, Գեղարքունիքի մարզպետարանի պատվերով վերջերս նկարահանված վավերագրական ֆիլմը, որով նրանք ծանոթացան մարզի գրավչություններին, ժողովրդագրական տեղեկություններին, մշակութային արժեքներին, բնակավայրերին:

Հանդիպման ընթացքում խոսվեց հոկտեմբերի 15-ին եւ 18-ին Ֆրանսիայի Վալանս քաղաքում կայանալիք հայ-ֆրանսիական համագործակցության համաժողովի մասին, ուր քննարկվելու են հետագա համագործակցության հետ կապված խնդիրներ եւ վավերացվելու է Գեղարքունիք-Իզեր առեւտրատնտեսական պայմանագիրը: Պայմանագրում հստակորեն ամրագրվելու են առաջիկա

անելիքները

եւ

ուղղությունները:

Հանդիպման ավարտից հետո հյուրերը մեկնեցին Արցախ: